

տասխանելով ջերմեռանդութեամբ՝ անոր խանդաղատանքը վաստկեցաւ. եւ 1613ին դարձեալ Հռոմ ղըկեց նոյն վարդապետը, նորոգելու համար իր հնազանդութիւնը, եւ հաղորդելու համար՝ որ շատ Հայեր ետ կեցան մոլորութենէն:

Զաքարիա Վ. Սկիւտար նստելով 1617ին իրեն յատուկ Մայր եկեղեցի մը շինեց այն ատեն “Ս. Կարապետ” անուամբ (անշուշտ Վարդայ Ս. Կարապետի իբր յիշատակ), որուն վրայ կենսագրութեանս վերջը տես:

Գաւազանագիրք կ'աւանդեն, որ Զաքարիա Վ. 1626—31 դարձեալ Պատրիարք եղած է ի Կ. Պոլիս. սակայն ինչպէս Յովհ. Խուլի կենսագրութեան մէջ տեսանք՝ հազիւ 1627—8ին եղած պիտի ըլլայ ընդհանրական Պատրիարք, Ստամպոլ նստելով: Այս միջոցէն մի միակ դէպք մը ծանօթ է: 1629ին Սահակ Կաթողիկոսն Էջմիածնի, եղբօրորդի Մելքիսեդեկի, որ ի վան կը նստէր, լսելով որ Էջմիածնի մէջ Մովսէս Վ.ը կաթողիկոս ընտրեր են, համախոհ շատ եպիսկոպոսներ եւ վարդապետներ գտնելով, Պօղոս Վ.ը՝ որ Սոյ Յովհ. Կաթողիկոսին եղբօրորդին էր, Պոլիս ղըկեց: “Եւ Պօղոս Վ.ն գնաց ի մեծ քաղաքն Կ. Պոլիս առ Զաքարիա Վ.ն. եւ էր Զաքարիա Վ.ս յերկրէն Վասպուրականի, եւ էր յայսմ ժամանակի առաջնորդ աղգին Հայոց՝ որ կային ի Կ. Պոլիս, զի անուամբ պատրիարգութեան՝ եւ թագաւորական մուղաթայիւ եւ հրամանաւ նստեալ էր առաջնորդ ի Կ. Պոլիս: Եւ էր սա յոյժ ներհակ